* * *

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Կայ անգին մի բան, որ մարդու դէմքին
Առաւել շքեղ, պայծառ է փայլում,
Քան մայր-ադամանդ պլբսակի ճակտին,
Քան թէ ծիածան երկնակամարում։

—

Անկեղծութիւն է նորա անունը.
Նորան օր-գիշեր ես պըտռում էի.
Ոակայն իմ սըրտում, իմ հէգ սըրտումը,
Միայն նոր ցաւեր ես դիզում էի։

—

Նորա փոխարէն ո՞րտեղ չը գտայ
Մոլար պատկերը կեղծաւորութեան.
Օ՛, նա փըռւած է աշխարհիս վերայ
Առանց ափերի, ինչպէս մի ովկեան։

—

Ես գըտայ նորան լըրագիրների
Համեստ դիմակով ծածկւած էջերում.
Առաքինութեան քարոզիչների
Ճարտար շըրթունքից ելած խօսքերում։

—

Ես գըտայ նորան բարեկամների
Կարեկցական, ջերմ ողջագուրանքում.
Եւ դաղաղի մօտ ազգականների
Սրգաւոր դէմքին և արցունքներում։

Ես գըտայ Նորան և քերթողների
Երևակայական, շինծու վըշտերում,
Եւ խընջոյքներում պատանիների
Համբոյրների մէջ, փրքուն ճառերում...

—

Բայց հազիւ թէ ես նըշմարում էի
Մէկի մէջ նըշոյլ պարզ անկեղծութեան,
Օ՛, ի՛նչ ցընծութեամբ ես մեկնում էի
Նորան ձեռքերըս բարեկամական։

—

Ես պատրաստ էի—փաթաթուել վըզով,
Անվերջ համբոյրներ դրոշմել ճակատին,
Հուպ տալ իմ կըրծքին, գոչել պարծանքով.
«Ահա բարեկամ, ահա մարդ անգին»։

Մոսկւա. 1889 թ., 12 դեկտեմբերի։